ՀՏԴ 72:069.424

Ա.Ռ. ԴԵՄԻՐՃՅԱՆ, Լ.Ա. ԴԵՄԻՐՉՅԱՆ, ԱՐՏԱԿ Ռ.ԴԵՄԻՐՉՅԱՆ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆՄՈՒՇՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՐԴԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

(Վանաձոր)

Սիլվա Կապուտիկյանի տուն-թանգարանի գրապահարանն ու կահույքի որոշ տարրեր բարոյապես և ֆիզիկապես հնացած են և պետք է փոխարինվեն: Դրանք փոխարինելու համար նախագծվել է ապակե ցուցափեղկ, որտեղ կցուցադրվեն բանաստեղծուհու հարուստ ֆոնդերը:

Առանցքային բառեր. թանգարան, ցուցանմուշ, վերանորոգում, ցուցափեղկ, արդիականացում, ցուցադրություն:

Թանգարանային գործունեության վերլուծությունը թույլ է տալիս ասել, որ ցուցադրությունները ևս հադիսանում են թանգարանի շարժունակ տարրեր: Նույնիսկ, այսպես կոչված, մշտական ցուցադրությունները, ըստ Է. Սվեցիմսկու, միջին հաշվով յուրաքանչյուր 30 տարին մեկ բարոյապես հնանում են և ենթակա են արդիականացման [1]: Այսպիսով, յուրաքանչյուր թանգարան իր գործունեության ընթացքում պարբերաբար ենթարկվում է անհրաժեշտ վերականգնման (ռեստավրացիայի), ինչպես նաև որոշ ցուցանմուշների մասնակի նորոգման կամ ամբողջական փոխարինման:

Լատիներեն «էքպոզիցիա» բառը ծագում է «expositio – ցուցադրել» բառից և լայն իմաստով նշանակում է առարկաների ցանկացած համատեղում՝ հատուկ ցուցադրության համար:

Ժամանակակից թանգարանաբանությունը թանգարանային էքսպոզիցիան ընկալում է որպես ամբողջական տարածական համակարգ, որտեղ թանգարանային առարկաները և այլ ցուցադրական նյութեր միավորված են հայեցակարգային իմաստով: Տվյալ հայեցակարգային մտածվածքը կամ գաղափարը թույլ է տալիս դիտողին էքպոզիցիայի մեջ տեսնել ոչ միայն թանգարանային ցուցանմուշները, այլև յուրաքանչյուր առարկայի օգտագործման առանձնահատկությունները, ինչպես նաև պատկերացնել այդ ցուցանմուշով պայմանավորված իրադարձությունները, աշխարհագրությունը, հնարավոր տեղաշարժերը և այլն:

Թանգարանային էքսպոզիցիան այս իմաստով թանգարանային հաղորդակցության հիմնական ձևն է, որի նպատակները իրականացվում են թանգարանային առարկաների ցուցադրությամբ, որն էլ կազմակերպված, բացատրված

և ներկայացված է թանգարանի կողմից մշակված գիտականհայեցակարգին համապատասխան և ունի ժամանակակից ճարտարապետա- գեղարվեստական լուծումներ [2]:

Ըստ ոլորտի արդի և առաջատար տեսաբաններից մեկի՝ Տ.Պոլյակովի՝ թանգարանային ցուցադրությունը թանգարանի հոգևոր պահպանման կամ գոյության որոշիչ ձևն է և ներառում է հավաքածուների տարածական ցուցադ- րությունը հատուկ նպատակով՝ գիտական, կրթական, գեղարվեստական [3]: Երբ խոսում ենք թանգարանային ցուցադրության արվեստի մասին, ապա ենթադրում ենք թանգարանային առարկաների ներկայացման յուրօրինակ ձև, որն արտացոլված է պատմական գործընթացի ստեղծագործական մոդելավոր- ման մեջ:

Սիլվա Կապուտիկյանի տուն-թանգարանն իր գործունեությունը սկսել է բանաստեղծուհու մահվանից 3 տարի անց՝ 2009 թ. հուլիսից, այն տանը, որտեղ կյանքի վերջին 30 տարիներին ապրել է ականավոր բանաստեղծուհին:

Թանգարանի հուշային մասը զբաղեցնում է 4-րդ հարկում գտնվող 4- սենյականոց բնակարանի մի մասը: Ուշագրավ է, որ բանաստեղծուհին ոչ միայն կտակել, այլև իր ձեռքով է ստեղծել տուն-թանգարանի նախնական ցուցադրութ- յունը, որն անփոփոխ է մինչ օրս: Ցուցադրության հուշային մասը սկսվում է բնակարանի նախամուտքից, երկրորդ սրահը բանաստեղծուհու աշխատասեն- յակ-ննջարանն է, երրորդը՝ հյուրասենյակը: Բանաստեղծուհու կենդանության օրոք բնակարանը ունեցել է բաց պատշգամբ, որը թանգարանի ստեղծման ժամանակ դարձել է ցուցասրահ և ներկայացնում է բանաստեղծուհու կյանքին վերաբերող հետաքրքիր դրվագներ, հայտնի մարդկանցից ստացված հուշանվերներ, պար- գևներ և նրա կյանքի օրոք հրատարակված գրքեր: Սրահին առանձնակի շուք է տալիս բանաստեղծուհու որդու՝ անվանի քանդակագործ, ՀՀ ժողովրդական նկարիչ Արա Շիրազի կերտած գիպսե կիսանդրին:

Տուն-թանգարանի հիմնանորոգումից (2019) և ջեռուցման համակարգի անցկացումից (2020) հետո՝ թանգարանի ստեղծումից 10-11 տարի անց, ցուցա- նմուշների պահպանության համար վերջապես հաստատվեցին բարվոք պայման- ներ, և ապահովվեց կայուն ջերմաստիճան: Թանգարանը վերստացավ 1980- ականների այն տեսքը, որ կերտել էր բանաստեղծուհին բնակարանի առաջին վերանորոգման ժամանակ: Անհրաժեշտ այդ հարցերի լուծումից հետո ներկայիս կարևորագույն խնդիրը աշխատասենյակի արդիականացումն է՝ ցուցադրական տեխնիկայի՝ էկրանների ձեռքբերմամբ և 3,3 - մետրանոց պահարան-ցուցա- փեղկի կառուցմամբ: Սենյակում դրված՝ հիմնականում փակ դռներով գրապա- հարանը (նկ.1) և կահույքի որոշ մասեր ենթակա են փոխարինման, որոնց համար

նախագծվել է ապակյա ցուցափեղկ (նկ.2): Սույն փոփոխությունը անհրաժեշտ է ոչ միայն տուն-թանգարանի ֆոնդերում պահվող բազմաթիվ ցուցանմուշները լիարժեքորեն ցուցադրելու, այլև բանաստեղծուհու կյանքն ու գործունեությունը ավելի առարկայորեն (հագուստ, զարդեր, տիկնիկներ, ձեռագրեր, բացիկներ...) ներկայացնելու, կրթական արդի ծրագրերով թանգարանի գործունեությունն ակտիվացնելու, այցելուների համար իրոք տեղեկատվական ցուցահանդեսներ և նոր համատեղումներ կազմակերպելու համար:

Նկ. 1

Նկ. 2

Բոլոր այս փոփոխությունները՝ կահույքի որոշ մասի փոխարինում և արդի տեխնիկայի ներմուծում, համաձայնեցվել է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի տնօրենության և ՀՀ ԿԳՄՍ համապատասխան գերատեսչության հետ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Свецимский Е.** Модернизация музейных экспозиций: Методические рекомендации / Сост. и пер. М.Б. Гнедовский. -М., 1989. –57 с.
2. Основы экскурсионной и выставочной деятельности: Программа учебной дисциплины и методические указания к выполнению контрольной и курсовой работы для студентов специальности “Социально-культурный сервис и туризмѣ / Сост. **Л.В. Отт**. -Рыбинск, 2006. –344 с.
3. **Поляков Т.** Как делать музей` (о методах проектирования музейной экспозиции). -М., 1996. -С. 10-15.

АРМЕНУИ Р. ДЕМИРЧЯН, Л.А. ДЕМИРЧЯН, АРТАК Р. ДЕМИРЧЯН

ПРЕДСТАВЛЕНИЕ ЭКСПОНАТОВ КУЛЬТУРНОГО НАСЛЕДИЯ В КОНТЕКСТЕ СОВРЕМЕННОГО АРХИТЕКТУРНОГО ДИЗАЙНА

Книжный шкаф и некоторые элементы мебели дома-музея Сильвы Капутикян морально и физически устарели и подлежат замене. Для их замены спроектирована стеклянная витрина, которая будет выставлять богатые фонды поэтессы.

Ключевые слова: музей, экспонат, реконструкция, витрина, модернизация, экспозиция.

ARMENUHI R. DEMIRCHYAN, L.A. DEMIRCHYAN, ARTAK R. DEMIRCHYAN

PRESENTING THE CULTURAL HERITAGE EXHIBITS IN THE CONTEXT OF MODERN ARCHITECTURAL DESIGN

The bookcase and some elements of furniture of the house-museum of Silva Kaputikyan are morally and physically obsolete and should be replaced. To replace them, a glass showcase has been designed, which will display the rich funds of the poetess.

Keywords: museum, exhibit, reconstruction, showcase, visitor, exposition, modernization.